«Ուղղակի ժողովրդավարություն»
ժողովրդավարական ինստիտուտների
ամրապնդման ՀԿ

Հասցե՝ քաղաք Վանաձոր,
Տիգրան Մեծի *47/13-1*

Հեռ. *(+374) (98) 200-166*

DIRECT DEMOCRACY
For Consolidation Of Democratic Institutions NGO

''Direct democracy'' NGO for consolidation of democratic institutions

Address: Lori Region, Vanadzor, Tigran Mets 47/13-1

Tel. (+374) (98) 200-166

ԹԻՎ 01/170
15.09.2025թ.

ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանին

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Հարգելի պարոն Մկրտչյան

Վանաձոր համայնքի ղեկավարի 26.02.2025 թվականին երևանյան խճուղի 94/9 հասցեում գտնվող 0.90 ընդհանուր մակերեսով պատը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 344,23 քմ հողամասն ուղիղ վաճառքով օտարվել է քաղաքացի Օվսաննա Խուդավերդյանին: Ինքնին կասկածելի է թվում այն հանգամանքը, որ գրեթե 1 մետր մակերեսով պատը կարող է ունենալ 344,23 քմ սպասարկման հողամաս, սակայն այս որոշման ոչ իրավաչափության հիմնական շեշտը կայանում է նրանում, որ քաղաքացին իր դիմումը ներկայացրել է 20.05.2024թ., իսկ հողհատկացմամբ ավագանու վերջին նիստը տեղի է ունեցել 13.05.2024 թվականին, այսինքն քաղաքացին դիմում է տվել ավագանու նիստից 7 օր անց և այդ հողը չէր կարող ներառված լիներ ավագանու որոշման մեջ, ուստի նման որոշում կայացնելու համայնքի ղեկավարը իրավունք չուներ:

Խնդրում եմ կատարել օրենքով նախատեսված գործողություններ՝ ոչ իրավաչափությամբ իրականացված որոշումը և դրանից բխած գրանցումը առոչինչ ճանաչելու, ինչպես նաև ներքին ծառայողական քննություն իրականացնել, պարզելու համար թե ում մեղավորությամբ է այդ ապօրինությունը տեղի ունեցել: Մասնավորապես նման նախագծերը անցնում են ոչ միայն մեկ բաժնից համայնքի ղեկավարին՝ ստորագրման համար, այլ նախագիծ դառնալուց դուրս է գալիս ճարտարապետական բաժնից, շրջանառվում՝ ճարտարապետական բաժնից իրավաբանական և ապա քարտուղարություն, բոլորի մոտ հարցեր չառաջանալու պարագայում հասնում աշխատակազմի քարտուղարին, որը փաստաթղթի ճիշտ լինելը հավաստում է և փոխանցում համայնքի ղեկավարին ստորագրման:

Սույնով պայմանավորված խնդրում եմ իրականացնել գործողություններ և տեղեկացնել ընթացքի և արդյունքների մասին:

Կից ուղարկում եմ համայնքի ղեկավարի որոշումը:

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան

15.09.2025թ.

h.1638290
15-09-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Փ., 47/13-1,*
directdemocracymonitoring@gmail.com : 37477343745

Գրությունը ուղարկվել է էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով՝ կազմակերպության կողմից առանձին կցված ֆայլով:

Կից՝ 2 ֆայլ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2025 թվականի N 532

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 94/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՍԱՆՆԱ ՊԱՎԵԼԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օսաննա Պավելի Խուդավերդյանի 20.05.2024թ. թիվ 02/8932 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20012025-06-0029 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 94/9 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 0.90 ընդհանուր մակերեսով պարիսպը, 3020/երեք հազար քսան/ ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.034423հա մակերեսով հողամասը 993970 /ինը հարյուր իննսուն երեք հազար ինը հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Օսաննա Պավելի Խուդավերդյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Օսաննա Պավելի Խուդավերդյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՎԻՐԱԲՅԱՆ